ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

21 ՀՈՒԼԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 214-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի բնակիչներ Սոֆիկ Արթուրի Ավագյանին և Էդգար Գրիշայի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող, Վայք համայնքի Գոմք բնակավայրի 2-րդ փողոցի 4բնակելի տուն հասցեում գտնվող 0.26987 հա մակերեսով, 10-019-0009-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը՝ հողամասը բաժանել երկու առանձին գույքային միավորների:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «բ» ենթակետի և 33-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորին տրամադրել հետևյալ հասցեն.

- Վայք համայնք, Գոմք, 2-րդ փողոց, 6 բնակելի տուն, մակերեսը՝ 0.19115 հա, (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025GXQNE4),

- Վայք համայնք, Գոմք, 2-րդ փողոց, 6/1 հողամաս, մակերեսը՝ 0.07872 հա, (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025SYL3K9)

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

24 ՀՈՒԼԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 215-Ա

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, հիմք ընդունելով Վայքի ավանային խորհրդի գործադիր կոմիտեի 1990 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը և քաղաքացի Էմմա Ստեփանյանի դիմումը (մտ. Ս-32, 12.05.2025թ).

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վերականգնել քաղաքացի Էմմա Եղիշի Ստեփանյանին հատկացված՝ Վայք համայնքի Վայք քաղաքի Ս.Շահումյան փողոց 2/27 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության 0.00180 հա հողամասի (կադաստրային ծածկագիր՝ 10-003-0010-0000) հողհատկացման փաստաթղթային հիմքերը և ճանաչել նրա սեփականության իրավունքը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

24 ՀՈՒԼԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 216-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉ ԷԼԼԱ ՌՈԼԱՆԻ ԱԶԻԶՅԱՆԻՆ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ» ՏԵՂԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ընտանեկան օրենսգրքի» 58-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 02.06.2016թ. թիվ 631-Ն որոշմամբ հաստատված Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության պահանջները և Վայք համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 22/07/2025 թվականի նիստի եզրակացությունը, ինչպես նաև մոր՝ Հասմիկ Մարգարյանի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Տալ համաձայնություն Վայք համայնքի անչափահաս բնակիչ Էլլա Ռոլանի Ազիզյանին (ծնված 06/02/2011 թվականին, ծննդյան վկայական՝ ԲԱ 903938) Երևան քաղաքում գտնվող Հայ օգնության ֆոնդի «Երեխաների պաշտպանության կենտրոնում» ժամանակավորապես տեղավորելուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

24 ՀՈՒԼԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 217-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ԹԻՎ 67-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի «ե» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.04.2003թ. «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 384-Ն որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ստեղծել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայություններ՝ հիմնված հետևյալ բազաների վրա և նշանակել պետեր.
ա) Վայք համայնքի քաղաքացիական պաշտպանության ինժեներական և կոմունալ տեխնիկական ծառայության՝ հիմնված Վայքի համայնքապետարանի բազայի վրա և պետ նշանակել «Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն Վարդան Ավետյանին:
բ) Վայքի համայնքի քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության՝ հիմնված Վայք համայնքի բնակիչների բազայի վրա, պետ նշանակել Վայք քաղաքի անասնաբույժ Վարդան Սարգսյանին:
գ) Վայքի համայնքի քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառայություն՝ հիմնված Վայքի համայնքապետարանի բազայի վրա, պետ նշանակել Վայքի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, տրանսպորտի բաժնի պետ Սամվել Իխտիարյանին:
դ) Վայքի համայնքի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայություն՝ «Վայքի պոլիկլինիկա»ՓԲԸ-ի բազայի վրա, պետ նշանակել «Վայքի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն Ռոբերտ Ասլանյանին:

ե) Վայքի համայնքի քաղաքացիական պաշտպանության էներգետիկայի ծառայություն՝ հիմնված «ՀԱՅԷԼՑԱՆՑ» ՓԲԸ «Արաքս» մասնաճյուղ «Վայք» էլեկտրացանցի բազայի հիման վրա, պետ նշանակել «Վայք» էլեկտրացանցի ԱՏԲ ավագ ճարտարագետ Արմեն Հարությունյանին:
զ) Վայքի համայնքի քաղաքացիական պաշտպանության կապի ծառայություն՝ հիմնված «ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻ»ՓԲԸ Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ ցանցերի շահագործման ուղղության ցանցի բազայի վրա, պետ նշանակել «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի Վայոց ձորի և Սյունիքի ցանցերի շահագործման ուղղության ղեկավար Հովսեփ Հովսեփյանին:
2. Հաստատել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունները ըստ հավելված 1-ից 6-ի:
3. Հանձնարարել ծառայությունների պետերին 6-ամսյա ժամկետում մշակել ծառայությունների քաղաքացիական պաշտպանության պլանները՝ համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի « ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի N 633 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1187-Ն որոշման:
4. Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 11-ի «Վայք համայնքի քաղաքացիական պաշտպանության ծառայություններ ստեղծելու մասին» N 67-Ա որոշումը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

29 ՀՈՒԼԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 218-Ա

ՎԱՐԴԻՇԱՂ ԱՂԱՍՈՒ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Իրավունքը հաստատած փաստաթղթեր չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117 օրենքով,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ճանաչել Վայք համայնքի բնակչուհի Վարդիշաղ Աղասու Ավագյանին (ծնված՝ 16.03.1934թ) Վայք համայնք, ք. Վայք, Իսրայել Օրու փողոց, 1 բնակելի տուն հասցեում գտնվող 0,0800 մակերեսով հողամասի (ծածկագիր՝ 10-003-0032-0002), և հողամասի վրա առկա շինությունների (ավտոտնակ, թոնրատուն, անասնագոմ) նկատմամբ սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

29 ՀՈՒԼԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 219-Ա

ՎԱՐԴԻՇԱՂ ԱՂԱՍՈՒ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդիշաղ Ավագյանի դիմումը և «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002թվականի դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որը նրանց պատկանող հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցուցակում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության , ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքը և չի առաջացնում սերվիտուտ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ճանաչել Վարդիշաղ Աղասու Ավագյանի /ծնված՝ 1934թ./ սեփականության իրավունքը ըստ քարտեզագրման արդյունքների 0.0300 հա ընդհանուր մակերեսով ավել օգտագործվող, Վայք համանյքի, ք. Վայք, Իսրայել Օրու փողոց, 1 բնակելի տուն հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0032-0002 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

29 ՀՈՒԼԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 220-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏԱՆՈՒՇ ՆԻԿՈՂՈՍԻ ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,08 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ (մտից U-58, 29.07.2025թ).

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի բնակիչ Արտանուշ Նիկողոսի Սամսոնյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով պատկանող, Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0,08 հա մակերես հողատարածքով, 73.4 քմ մակերեսով, 10-003-0011-0052 կադաստրային ծածկագրով շինությունը հասցեավորել՝ Վայք համայնք, ք. Վայք, Շահումյան փողոց, 32/1 բնակելի տուն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

30 ՀՈՒԼԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 221-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 19-ՐԴ ՓՈՂՈՑ, 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի բնակիչ Աննա Նորիկի Մուրադյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով պատկանող, Վայք համայնքի Ջառիթափ բնակավայրի 19-րդ փողոցի 3 հողամաս հասցեում գտնվող 0.08122 հա մակերեսով, 10-022-0037-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը՝ հողամասը բաժանել երկու առանձին գույքային միավորների:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «բ» ենթակետի և 33-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորին տրամադրել հետևյալ հասցեն.

- Վայք համայնք, Ջառիթափ , 19-րդ փողոց, 3/1 բնակելի տուն, մակերեսը՝ 0.0160 հա, (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025MCAKH8),

- Վայք համայնք, Ջառիթափ, 19-րդ փողոց, 3 հողամաս, մակերեսը՝ 0.06522 հա, (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025DHKJTJ)
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**